2011, ՓԵՏՐՎԱՐ Բ, ԹԻՎ 4 (336)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

### Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*15 փետրվարի*

### «Հայ միասնության խաչ» կազմակերպության անդամներին



Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց «Հայ միասնության խաչ» կազմակերպության ներկայացուցիչներին:

«Հայ միասնության խաչ» հասարակական կազմակերպության գործունեությունն ուղղված է քրիստոնեական արժեքների տարածմանը, մանուկների հոգեւոր դաստիարակությանը, տարբեր ոլորտներում նրանց շնորհների զարգացմանը, ինչպես նաեւ հաշմանդամ եւ ծնողազուրկ երեխաների խնամքին ու հասարակության մեջ ինտեգրմանը: Կազմակերպության առաքելության իրագործմանն աջակցում է նաեւ Մայր Աթոռ Սբ Էջմիածինը՝ քաջալերելով աստվածահաճո աշխատանքը եւ տրամադրելով գործունեության ընդլայնման համար անհրաժեշտ շենքային պայմաններ:

Հանդիպման ընթացքում կազմակերպության տնօրեն Գրիգոր Բաբախանյանը շնորհակալություն հայտնեց Նորին Սրբությանը՝ «Հայ միասնության խաչին» ցուցաբերվող ուշադրության համար, ապա ներկայացրեց վերջին շրջանի ձեռքբերումները՝ հայցելով Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությունը:

Նորին Սրբությանը ողջունեցին նաեւ մանուկները, ներկայացրեցին իրենց խմբակների գործունեությունը, հանդես եկան հոգեւոր երգերի կատարումներով, այնուհետեւ Գարեգին Բ Հայրապետին ընծայեցին իրենց ձեռքերով պատրաստված անվանական մի գորգ:

Վերջում կազմակերպության ղեկավարությանը եւ մանուկներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունն ուրախություն հայտնեց, որ տարեցտարի ընդլայնվում է կազմակերպության գործունեությունը, եւ նորանոր մանուկներ են ընդգրկվում խմբակներում: Վեհափառ Հայրապետը կոչ արեց ավելի սերտ համագործակցել Մայր Աթոռ Սբ Էջմիածնի հովանու ներքո գործող Էջմիածնի հայորդյաց տան հետ:

*17 փետրվարի*

### Չինաստանի արտաքին գործերի նախարարին

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին գործերի նախարար Յան Ջիեչիին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը գոհունակությամբ անդրադարձավ երկու պետությունների միջեւ իրականացվող փոխայցելություններին, ինչպես նաեւ շարունակ սերտացող մշակութային եւ տնտեսական գործակցությանը՝ ի բարօրություն երկու ժողովուրդների: Վեհափառ Հայրապետը խոսեց նաեւ հայ եւ չին ժողովուրդների պատմական կապերի մասին՝ կարեւորելով ներկա ժամանակներում ժողովուրդների բարեկամության ամրապնդումը եւ հետեւողական զարգացումը համընդհանուր մարտահրավերների հաղթահարման համար:

Չինաստանի արտաքին գործերի նախարարն իր հերթին ուրախություն հայտնեց Հայաստան եւ համայն հայության հոգեւոր կենտրոն այցելելու եւ հայկական բազմադարյան մշակույթը ճանաչելու հնարավորության առիթով, ապա ներկայացրեց երկու պետությունների ներկայիս փոխհարաբերությունները եւ շահեկան համագործակցությունը, մատնանշեց մշակութային



կապերը խորացնելու անհրաժեշտությունը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ եղավ նաեւ Հայոց Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտությանը, ինչը կկանխի նման ոճրագործության կրկնությունը ապագայում: Կարեւորվեց նաեւ խաղաղ ճանապարհով Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հարցը:

*Շարունակությունը՝ էջ 2*

## ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Փետրվարի 28-ին եւ մարտի 1-ին, Ս. Ղեւոնդյանց քահանայից տոնի առիթով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ մասնակցությամբ թեմակալ առաջնորդների, տեղի ունեցավ քահանայից ավանդական ամենամյա հավաքը: Հավաքին մասնակցում էր Մայր Աթոռի կառույցներում, վանքերում եւ Հայաստանի ու Արցախի թեմերում ծառայող շուրջ երկու հարյուր հիսուն եկեղեցական: Հավաքի քննարկման նյութն էր «Ընտանիքը եւ հոգեւոր հովիվը»:



Քահանայից հավաքը բացեց Շիրակի թեմի առաջնորդ Տ. Միքայել եպս Աջապահյանը: Այնուհետեւ Տ. Շահե աբեղա Անանյանը եկեղեցականներին ներկայացրեց «Ընտանիքը եւ հոգեւոր հովիվը» թեմայով զեկույց, որի շուրջ տեղի ունեցան քննարկումներ:

Ժողովի ավարտին հոգեւորականներին հայրապետական իր պատգամը հղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ իր գնահատանքը հայտնելով թեմակալ առաջնորդներին՝ քահանայից հավաքի կազմակերպմանը բերած աջակցության համար, ապա շնորհավորեց բոլոր քահանաներին՝ մաղթելով կոչման բարձր գիտակցությամբ շարունակել իրենց առաքելությունը՝ ի նպաստ բարեպաշտ ժողովրդի հոգեւոր կարիքների բավարարման: Վեհափառ Հայրապետն ընդգծեց ընտանիք-եկեղեցի կապի ամրապնդման այժմեականությունը՝ նշելով, որ հովիվները պետք է զբաղվեն երիտասարդների հոգեւոր դաստիարակությամբ՝ սկսած դեռեւս մանուկ հասակից՝ ամենօրյա հետեւողական աշխատանքով ու հոգատարությամբ զերծ պահելով երիտասարդ ընտանիքներին տարբեր տեսակի դժվարություններից ու փորձություններից: Անդրադառնալով եկեղեցականների դերակատարությանը եւ առաքելությանը՝ Նորին Սրբությունը նշեց. *«Մեր խնդիրը խաղաղություն, սեր եւ հաշտություն քարոզելն ու հաստատելն է ընտանեկան եւ ընկերային կյանքում... Մենք՝ որպես եկեղեցականներ, առավել չափով պարտականություններ ունենք մեր ժողովրդի առջեւ՝ նրանց հոգեւոր-բարոյական կյանքը կազմակերպելու, քրիստոնեական կրթությամբ եւ դաստիարակությամբ ապահովելու, որպեսզի ճշմարիտ քրիստոնեական ոգին կրող հայորդիներ ունենանք, խոր հավատացյալ, աստվածասեր, մարդասեր, եկեղեցասեր մարդիկ, եւ այդ պարտականությունը մեր առաքելությունն է»:*

Նորին Սրբությունն արձանագրեց, որ դեռ ահռելի աշխատանք կա ծառացած Եկեղեցու առջեւ. *«Այդ ահռելի աշխատանքը մեզ ոչ թե հուսալքության եւ թեւաթափության պետք է առաջնորդի, այլ մեր մեջ պիտի բորբոքի նախանձախնդրությունը, որպեսզի ավելի ճիգ ու ջանք գործադրենք, եռանդ ներդնենք մեր ծառայության մեջ»:*

Ժողովի ամփոփումից հետո Մայր տաճարում հոգեւոր դասը մասնակցեց երեկոյան ժամերգությանը եւ Ս. Ղեւոնդյանց քահանաների տոնի նախատոնակին:

Մարտի 1-ին՝ Ս. Ղեւոնդյանց տոնին, Մայր տաճարում մատուցվեց Պատարագ, որից հետո Վեհարանում տեղի ունեցավ պարգեւաբաշխություն: Ամենայն Հայոց Կաթողիկոսն ավագ քահանայության պատիվ շնորհեց Արարատյան հայրապետական թեմից Տ. Մկրտիչ քհն. Թովմասյանին եւ Տ. Կորյուն քհն. Մարտիրոսյանին, Արմավիրի թեմից՝ Տ. Գեղամ քհն. Քեսաբլյանին:

Ծաղկյա փիլոն կրելու իրավունք ստացան Արցախի թեմից Տ. Մինաս քհն. Մովսիսյանը, Տ. Էմանուել քհն. Վարդանյանը, Սեւանի վանքից՝ Տ. Մինաս քհն. Մարտիրոսյանը, Հարավային Ռուսաստանի թեմից՝ Տ. Սարգիս քհն. Պողոսյանը, Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց՝ Տ. Ղեւոնդ քհն. Մայիլյանը:

Լանջախաչ կրելու իրավունքի արժանացավ տարբեր թեմերի շուրջ 25 քահանա:

Ժողովի ավարտին հոգեւորականաց դասը հանդես եկավ հայտարարությամբ.

*Շարունակությունը՝ էջ 2*

# ՔԱՀԱՆԱՅԻՑ ՀԱՎԱՔԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ



*Սկիզբը՝ էջ 1*

*«Մենք՝ Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու հոգեւոր սպասավորներս, քննության առնելով հայ ընտանիքի առջեւ ծառացած մարտահրավերները, կարեւորությամբ ընդգծում ենք հայրենի պետության եւ հասարակության կյանքում ընտանիքի բացառիկ արժեքը եւ ազգապահպան առաքելությունը: Դարեր շարունակ աստվածադիր ամուսնական միության սրբազան պատվիրանը հիմն է եղել հայ ավանդական ընտանիքի՝ իբրեւ փոքր եկեղեցու, որին հատուկ են եղել աստվածսիրությունն ու հայրենասիրությունը, ընտանեկան սրբությունն ու հավատարմությունը՝ ազգային, բարոյական ու հոգեւոր արժեքներին: Այս ամենը օրհնվել ու նվիրագործվել է ս. Պսակի մեծ խորհրդով եւ այն գիտակցությամբ, թե՝ «Եվ երկուսը մեկ մարմին պիտի լինեն, ...որ Աստված միացրեց, մարդը թող չբաժանի» (Մատթ. ԺԹ 6):*

*Մեր հովվական ծառայության ընթացքում, սակայն, ականատեսն ենք հասարակական գիտակցության ու վարքի մեջ դրսեւորվող մտահոգիչ երեւույթների, որոնք նաեւ հետեւանք են մեզանում հոգեւոր կյանքի ու ավանդական բարոյական արժեքների տկարացման, համաշխարհայնացման ու աշխարհիկացման գործընթացների, սոցիալական ու տնտեսական դժվարությունների: Այսօր հայ ընտանիքի առջեւ ծառացած են բարոյական այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են ամուսնության եւ Պսակի խորհրդի ընկալման աղճատումը, կողակցի ու ընտանիքի, զավակների ազգային-հոգեւոր դաստիարակության հանդեպ պատասխանատվության անկումը: Նմանօրինակ մտայնության եւ վիճակների անցանկալի հետեւանք են ամուսնական անհավատարմությունը, ընտանեկան բռնությունը, հղիության արհեստական ընդհատումը եւ այլ մերժելի երեւույթներ: Հայ ընտանիքում ընտանեկան բնական կյանքի խաթարման եւ հաճախ ամուսնալուծության պատճառ է դառնում նաեւ տարբեր կրոնական կազմակերպությունների եւ շարժումների քայքայիչ գործունեությունը՝ դրանից բխող դառն հետեւանքներով:*

*Այս ամենով մտահոգված՝ ընդգծում ենք անհրաժեշտությունը մեր հովվական ծառայության մեջ առավել գործուն ջանքեր ներդնելու՝ ի զորացումն Եկեղեցու եւ ընտանիքի դարավոր կապի՝ հանապազօրյա խնամքով, եկեղեցածիսական արարողություններով, նախաամուսնական եւ հետամուսնական շրջանում զույգերի հետ իրականացվող հետեւողական հոգեւոր-խորհրդատվական ծառայություններով:*

*Ամուսնացող զույգերին հորդորում ենք ամուսնության նկատմամբ առավել պատասխանատու մոտեցում ցուցաբերել՝ օրինակ ունենալով մեր աստվածապաշտ հայրերին, եւ ս. Պսակի խորհուրդն ընդունել որպես անշահախնդիր սիրո, միմյանց սատարումի եւ հոգատարության անքակտելի սուրբ միություն:*

*Այս նկատառումով մեծապես կարեւորում ենք մեր ողջ հանրության՝ անհատների, պետական եւ հասարակական կառույցների, զանգվածային լրատվության միջոցների համագործակցությունը՝ հայ ընտանիքի ավանդական արժեհամակարգի ամրապնդման եւ ընտանիքի սրբության դեմ կատարվող ոտնձգությունների կանխարգելման գործում:*

*Աղոթում ենք երկնավոր մեր Տիրոջը՝ հայրենի մեր երկրի խաղաղ, ապահով ու առաջընթաց կյանքի համար, որպեսզի ապավինությամբ առ հարուցյալն Աստված, ազգային եւ հոգեւոր միաբանությամբ շարունակենք ջանքեր ներդնել հայ ընտանիքի առջեւ ծառացած խնդիրների լուծմանն ի նպաստ:*

*Հավատում ենք, որ կհաղթահարվեն հասարակական մեր կյանքը հուզող բոլոր տեսակի դժվարությունները, եթե մեզանում գերիշխեն հավատն առ Աստված, սերը եւ վստահությունը միմյանց, Հայրենիքի եւ Մայր Եկեղեցու հանդեպ, հավատարմությունը մեր ազգային արժեքներին ու նախնյաց ավանդներին»:*

# ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

## Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

*Սկիզբը՝ էջ 1*

*27 փետրվարի*

### «Արարատ» միության անդամներին

Վեհափառ Հայրապետն ընդունեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցու «Արարատ» միության անդամներին՝ ուղեկցությամբ միության հոգեւոր հովիվ Տ. Հակոբ քահանա Խաչատրյանի:

«Արարատ» միությունը հիմնադրվել է 1989 թ.՝ Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի կողմից՝ Արարատյան թեմում իր առաջնորդական փոխանորդության շրջանում: Լինելով Հայ Առաքելական Եկեղեցու առաջին երիտասարդական նմանօրինակ կառույցը՝ այն անվանվել էր Հայ Եկեղեցու երիտասարդաց միություն, իսկ հետագայում վերանվանվել «Արարատ» միության: Այսօր միությունը բազմաթիվ ծրագրեր է իրականացնում, գործում են տարբեր խմբակներ, ուր երիտասարդները կրթվում են, ծանոթանում հոգեւոր արժեքներին, կազմակերպվում են խոկումներ, ուխտագնացություններ, այցելություններ տարբեր սոցիալական հաստատություններ:

Մինչ հանդիպումը միության նախաձեռնությամբ Մայր Աթոռի մատուռ-մկրտարանում կազմակերպվել էր միության տասնինը նոր անդամների մկրտությունը:

Հանդիպմանը Վեհափառ Հայրապետն իր գնահատանքը, օրհնությունն ու հայրական սերը բերեց երիտասարդներին: *«Շնորհակալ եմ այս գեղեցիկ պահի համար, որ պարգեւեցիք ինձ: Ես վերապրեցի այն գեղեցիկ տարիները, երբ Արարատյան թեմում շրջապատված էի երիտասարդներով, ովքեր իմ կյանքին, իմ հոգեւոր ծառայությանն ու առաքելությանը նոր իմաստ հաղորդեցին»*,- նշեց Նորին Սրբությունը՝ վերհիշելով միության հիմնադրման մանրամասները եւ երիտասարդական կառույցի հետագա գործունեությունը:

Վեհափառ Հայրապետը, շնորհավորելով նոր մկրտվածներին ու նրանց կնքահայրերին, մաղթեց, որ Աստծո շնորհներով զորանան իրենց հավատքի մեջ եւ կարողանան ապրել իրենց կյանքը՝ Տիրոջ պատվիրանների համաձայն: Վեհափառ Հայրապետը նրանց հանձնեց Նոր Կտակարան եւ հուշանվերներ, ապա պատասխանեց երիտասարդներին հուզող բազում հարցերի:

Վերջում հոգեւոր երգերի կատարումներով ելույթ ունեցավ միության «Արարատ» երգչախումբը:

# «Եկեղեցու առաքելությունը խիստ կարեւոր է եւ էական՝ մեր ազգային կյանքի առաջընթացի, մեր ինքնության պահպանման համար...»

Փետրվարի 18-ին՝ Սբ Սարգսի տոնի նախօրեին, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հանդիպում ունեցավ Հայ Եկեղեցու հայաստանյան թեմական երիտասարդական կառույցների, հասարակական կազմակերպությունների շուրջ հինգ հարյուր երիտասարդների հետ: Սա Հայ Եկեղեցու Համաշխարհային երիտասարդական կազմակերպության (ՀԵՀԵԿ) կողմից «Հայրապետական պատգամ» ծրագրի շրջանակներում կազմակերպված առաջին հանդիպումն էր Ամենայն Հայոց Կաթողիկոսի հետ: Հանդիպման խորագիրն էր «Հայ Եկեղեցին երիտասարդների կյանքում, երիտասարդները՝ Հայ Եկեղեցում»:

Հանդիպման սկզբում երիտասարդների անունից խոսք ասաց ՀԵՀԵԿ-ի հոգեւոր պատասխանատու Տ. Եղիշե վրդ. Ավետիսյանը. «...Հայ եկեղեցասեր երիտասարդական կազմակերպության անդամներին է տրված սրբազան պարտականությունը՝ դառնալու մեր ազգի եւ Եկեղեցու ոգեղեն ու առինքնող այն ուժը, որ իրենց շուրջը պիտի հավաքի համայն



աշխարհի հայ երիտասարդությանը՝ նպատակ ունենալով նրանց մեջ վերարթնացնելու հայրերի հավատքն ու մագաղաթյա դարերի ազգային իմաստությունը, նրանց գիտակցության մեջ ամրագրելու սերն ու նախանձախնդրությունը հայրենիքի եւ Եկեղեցու նկատմամբ»:

ՀԵՀԵԿ-ի ատենապետ Կարեն Պետրոսյանը ներկայացրեց կազմակերպության կենտրոնական գրասենյակի գործունեության հաշվետվությունը՝ շնորհակալություն հայտնելով Նորին Սրբությանն ու եկեղեցականների դասին՝ հոգատար վերաբերմունքի համար, եւ շեշտելով. «Մայր Աթոռ Սբ Էջմիածինն ու Ամենայն Հայոց Հայրապետն են մեր ուժն ու զորությունը»: Այնուհետեւ հարյուրավոր երիտասարդներին հայրապետական իր պատգամն ուղղեց Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Հանդիպման առիթով Նորին Սրբությունն իր գնահատանքը հայտնեց կազմակերպության պատասխանատուներին՝ գլխավորությամբ ԱՄՆ Արեւմտյան հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան արք. Տերտերյանի, ինչպես նաեւ երիտասարդական կառույցների գործունեությանը սատարող թեմակալ առաջնորդներին՝ նկատելով, որ այս հանդիպումը լավագույն վկայությունն է կազմակերպության աշխույժ եւ արդյունավոր գործունեության:

*«Մենք զորեղ ենք մեր հավատացյալներով, զորեղ ենք ձեզանով, սիրելի՛ երիտասարդներ, եւ մեզ համար մեծ մխիթարություն է տեսնել, որ անկախության այս տարիներին երիտասարդներն այլեւս նախանձախնդրորեն համախմբվում են Եկեղեցու շուրջ, ապրում են հոգեւոր կյանքով, իրենց ծառայությունը բերում մեր Եկեղեցու առաքելությանը եւ ջանք գործադրում, որպեսզի Քրիստոսի Ավետարանի պատվիրաններով, պատգամներով եւ քրիստոնեական բարոյականով կրթվեն ու դաստիարակվեն հայորդիները»*,- նշեց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետն իր խոսքում անդրադարձավ ժողովրդի եւ Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերներին, որոնց դիմագրավումը եկեղեցական ասպարեզում հնարավոր նկատեց ակտիվ համագործակցությամբ բարեպաշտ ժողովրդի եւ առավելապես երիտասարդների:

Նորին Սրբությունը խոսեց նաեւ հոգեւոր-ազգային կյանքի վերակառուցման հրամայականի մասին, որպեսզի մեր Եկեղեցին, որպես ազգային Եկեղեցի, շարունակի իր առաքելությունը կատարել մեր ժողովրդի կյանքում՝ անխաթար ու անաղարտ պահելով իր ազգային նկարագիրը: *«Ազգային Եկեղեցի հասկացությունը ենթադրում է առաջին հերթին եկեղեցական-վարչական կյանքում ազգի զավակների ներկայություն: Դարեր շարունակ մեր Եկեղեցին իր կյանքը կազմակերպելիս որդեգրել է այդ սկզբունքը: Այսօր էլ ցանկանում ենք, որպեսզի թեմական, համայնքային վարչական կյանքը վերակառուցվի, գործեն եկեղեցական համայնքներն իրենց վարչություններով, թեմական պատգամավորական ժողովները, համայնքային կյանքում՝ անդամական ժողովները, ...որպեսզի Եկեղեցին լիարժեքորեն, ավելի զորեղ կերպով ներգրավված լինի մեր ազգային կյանքի մեջ, ներկայություն դառնա մեր ժողովրդի կյանքի բոլոր ոլորտներում»*,- նշեց Հայոց Հայրապետը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց կազմակերպության անդամներին նորանոր երիտասարդներով ավելի ստվար դարձնել իրենց շարքերը, լինել քարոզիչներ մեր հայրերի հավատի, հաղորդակցվել հայոց պատմությանը եւ եկեղեցական ավանդներին, կյանքում առաջնորդվել աստվածսիրությամբ, Վարդանանց ոգով ու ազգային-հոգեւոր արժեքների բարձր գիտակցությամբ, որպեսզի կարողանան դիմակայել ժամանակի փորձություններին եւ դյուրությամբ հաղթահարել դրանք:

Երեք ժամ տեւած հանդիպման ընթացքում երիտասարդներն Ամենայն Հայոց Կաթողիկոսից ստացան նաեւ իրենց հուզող հարցերի պատասխանները, հանդես եկան տարբեր առաջարկներով: Հարցադրումները հիմնականում վերաբերում էին Եկեղեցի-պետություն հարաբերություններին, հոգեւորականների պատրաստությանը, պատմական եկեղեցիների վերականգնման եւ նոր տաճարների կառուցման աշխատանքներին, Վիրահայոց թեմի կարգավիճակի եւ եկեղեցիների վերադարձման խնդիրներին, հարեւան երկրներում պատմական հայկական հուշարձանների ոչնչացման փաստերին:

Վերջում երիտասարդներն այցելեցին Մայր տաճար, ուր աղոթքով նորոգեցին իրենց ուխտը Իջման ս. Սեղանի առջեւ:

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ (1655-1680)

*Սկիզբը՝ 2010-ի թիվ 22-24, 2011-ի թիվ1-3*



Երբ Եղիազարը 1659-ին տիրացավ Սբ Հակոբի վանքին, նվիրակներ ուղարկեց՝ դրամ հավաքելու համար, որոնցից էր Սարգիս եպս Թեքիրտաղցին, որն աշակերտել էր Աստվածատուր պատրիարքին: Նա, որպես Երուսաղեմի միաբան, գնաց Կաֆա եւ բավականին մեծ գումար հավաքեց, սակայն Երուսաղեմ դառնալով՝ փոքր գումար ցույց տվեց: Եղիազարը կասկածեց եւ Ղրիմից բերված հաշիվներով ստուգեց, որ Սարգիսը գումարը ճանաչի եւ վճարելու մուրհակներ տա: Եղիազարը դրանք կես գնով վաճառեց այլազգիներին, որոնք սկսեցին Սարգսին նեղել: Նա Կ. Պոլիս գնաց, որ գումար հավաքի, բայց չհաջողեց եւ պարտատերերի բողոքի վրա բանտարկվեց: Բանտում նա իրեն բախտակից գտավ Ղազար Սեբաստացուն, որին Թութունչի Հովհաննեսը բանտարկել էր տվել՝ պատրիարքությունից զրկելուց հետո: Մեկ տարի նրանք բանտում միասին անցկացրին եւ բարեկամացան ու իրենց թշնամիների դեմ ծրագրեր մշակեցին: Սկզբում Ղազարն իր կողմնակիցների միջոցով ազատվեց, իսկ Սարգսին ազատեցին պարտատերերը, որոնք հաջողեցրին նրան պատրիարք դարձնել, որպեսզի իրենց հին ու նոր պարտքերը հետ ստանան: Բանտից դուրս գալով՝ նա գնաց Ադրիանուպոլիս՝ մեծ վեզիրի մոտ, եւ պատրիարքության հրովարտակ վերցրեց: 1664-ին եկավ Կ. Պոլիս, վտարեց Հովհաննես Թութունչուն եւ տիրացավ պատրիարքությանը: Այդ ժամանակ էլ Եղիազարը կաթողիկոսական օծում ստացավ եւ կամենում էր Երուսաղեմ հաղթանակով մտնել, քանի որ հրովարտակ ուներ նաեւ Երուսաղեմի պատրիարքի համար: Աստվածատուր պատրիարքը եւ Երուսաղեմի միաբանները չճանաչեցին նրա պատրիարքությունը՝ օգտվելով Երուսաղեմի կուսակալ Էմիրհաճ փաշայի օժանդակությունից: Դիմեցին նաեւ Սարգիս Թեքիրտաղցի պատրիարքին, որը Եղիազարի մեծ թշնամին էր, որպեսզի նա Եղիազարի պատրիարքությունը վերացնի, եւ Աստվածատուրը պատրիարք ճանաչվի: Եղիազարը Երուսաղեմ մտնել չկարողացավ եւ վերածվեց թափառականի՝ շրջելով Եգիպտոսում, Դամասկոսում, Անտիոքում եւ Բերիայում, որպեսզի ուժեր հավաքի եւ տիրի Երուսաղեմին:

Հակաթոռ կաթողիկոսության ստեղծումը նոր գայթակղությունների, կաշառքների ու խռովությունների պատճառ դարձավ: Ընդդիմադիրները եւս ուժեղացրին իրենց ջանքերը: Հատկապես ակտիվ էր գործում նրա նախկին բարեկամ Մարտիրոս Կաֆացին, որն Էջմիածին էր անցել՝ նրա դեմ պայքարելու համար: Նա ամենուրեք վարկաբեկում էր նրան: Եվդոկիա հասած ժամանակ նա տեսավ Եղիազարի առաջին կոնդակը, ուստի նրան խիստ քննադատեց եւ նամակ ուղարկեց Բերիա, որտեղ գտնվում էր Եղիազարը: Իսկ որպեսզի Եղիազարը նամակն անպայման կարդա, նրա վրա գրեց՝ «Հայաստանյայց կաթողիկոս»: Այստեղից գնաց Էջմիածին, որպեսզի ավելի գրգռի Հակոբ կաթողիկոսին, եւ հանդես եկավ Եղիազարի բոլոր հակառակորդների կողմից: Նա կաթողիկոսին կոչ արեց գնալ Կ. Պոլիս, եւ հայրապետական ազդեցությամբ ու ժողովրդական համերաշխությամբ տապալել Երիազարին, հակաթոռության հերձվածը վերացնել: Հակոբը նրան Կ. Պոլիս ուղարկեց՝ Եղիազարի հակաթոռությունը տապալելու համար, իսկ ինքը շրջաբերական նամակներով ժողովրդին հորդորում էր զգուշանալ հակաթոռության աղետից եւ Մայր Աթոռի իրավունքները պաշտպանել: Նա բոլորին սիրո եւ միության կոչ արեց: Նա նույնիսկ Եղիազարին նամակ գրեց՝ համոզելով հրաժարվել հակաթոռությունից: Նրա մոտ ուղարկեց Հովհաննես Արզնեցի խելամիտ վարդապետին, որ աղետի առաջն առնի:

Մարտիրոս Կաֆացին Կ. Պոլիս հասավ 1665-ի սկզբներին եւ կանգնեց Եղիազարի դեմ շարժման գլուխ: Նա հաշտվեց բոլոր ուժերի հետ՝ ստանալու համար նրանց օժանդակությունը: Օսմանյան մայրաքաղաքում կային Պարսկաստանի պարսկահայ գավառներից գաղթածներ, որոնց գլխավորում էին Խուսրեւ եւ Միրզա մեծահարուստ իշխանավորները, որոնք սովորաբար ջահուկյաններ էին կոչվում, քանի որ Նախիջեւանի Ջահուկ գյուղից էին: Կային այլ գաղթականներ եւս Արեւելյան Հայաստանից, որոնք պարզապես արեւելցիներ էին կոչվում: Թըլթըլյանները, որ լատինասերներ էին, նույնպես նրան միացան: Ասենք, որ նրանք սկզբից էլ նրան հակառակորդ էին: Թըլթըլյաններն ընդհանրապես ստորին աստիճանի մարդկանց մեջ էին ուժեղ: Կաֆացին իր կողմը գրավեց նաեւ Ղազար Սեբաստացուն՝ իր տիվրիկցիներով, որը բանտից դուրս գալուց հետո ձգտում էր պատրիարքության: Նա հակառակորդ էր Եղիազարին, բայց նախկին ուժը չուներ՝ պարտքերը վճարած չլինելու պատճառով: Սրանք բոլորը միացած դուրս եկան Եղիազարի դեմ՝ Կաֆացու առաջնորդությամբ: Կաֆացին, թաղեթաղ գնալով, ամենուրեք պախարակում էր Եղիազարին:

Սակայն Եղիազարն էլ իր պաշտպաններն ուներ, որոնք գլխավորապես ծագում էին Փոքր Ասիայի նախկին Ռումի սուլթանության տարածքից եւ հայտնի էին հռոմցիներ անունով: Սրանք առանձին համակրանք չունեին Էջմիածնի նկատմամբ եւ զզված էին Էջմիածնի նվիրակներից: Կաֆացին ասում էր, որ նրանք տկար փոքրամասնություն են, իսկ սրանք էլ սպառնագին նամակներ ուղարկեցին նրան եւ ուրիշներին: Եղիազարականների գլխավորն Աբրո Չելեբին էր, որը հաջողեցրել էր Եղիազարի կաթողիկոսությունը եւ մեծ ազդեցություն ուներ Քյոփրյուլիօղլուի մոտ: Եղիազարի հույսը մեծ վեզիրի վրա էր:

Եղիազարը, ստանալով Կաֆացու նամակը, հակառակ Քյոմուրճյանի եւ իր աշակերտ Սուքիաս վարդապետի կարծիքին, այն հրապարակավ ընթերցել էր Բերիայում: Նա, չկարողանալով Երուսաղեմ մտնել, թափառական էր դարձել՝ երբեմն ծպտվելով վաճառականի անվան տակ կամ էլ՝ այլազգի իշխանավորի: Պատճառն այն էր, որ նրա հակառակորդները ժողովրդին ամենուր գրգռում էին նրա դեմ: Կամենում էին նրան ձերբակալել: 1665 թվի ապրիլին Եղիազարը Յոպպեում խառնվեց Եգիպտոսից եկած մի կարավանի, բայց Համա հասնելուն պես նրան մեկը ճանաչեց, ուստի նա խույս տվեց օթեւանից եւ Բեյլանում հանդիպեց Քյոմուրճյանին ու Դավթին, որոնցից նա օգնություն էր ակնկալում: Հետո նա ծպտյալ ճեպընթաց ձեւով հասավ Բուրսա՝ միտք ունենալով գնալ Ադրիանուպոլիս եւ օգնության խնդրանքով դիմել Քյոփրյուլիօղլուին: Նա լուր ուղարկեց Աբրոյին, որ սա մեծ վեզիրի մոտ խնդիրը նախապատրաստի: Այս առթիվ Ադրիանուպոլսում հայոց ազգային գործերի համար ատյան հրավիրվեց: Հովհաննես Թութունչին, որն արդեն պատրիարք չէր, թըլթըլյանների առաջնորդներից երկուսին վերցրած՝ գնաց մինչեւ Սերբիայի Բելգրադ քաղաքը՝ հետեւելով հունգարների պատերազմի հետեւանքով մեծ վեզիրի տեղաշարժերին: Պատերազմից հետո նա եկել էր Ադրիանուպոլիս, որտեղ էր եկել նաեւ Մարտիրոս Կաֆացին՝ կաթողիկոսի կողմից, որպեսզի Եղիազարի կաթողիկոսությունը տապալի եւ նոր հրովարտակով վերահաստատի Աստվածատուրի պատրիարքությունը:

*Շարունակությունը՝ էջ 5*

## Հոգեհանգստյան արարողություն՝ ի հիշատակ Սումգայիթի զոհերի



Փետրվարի 27-ին Մոսկվայի Ս. Հարություն եկեղեցու բակում տեղադրված Նահատակաց խաչքարի մոտ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպս Ներսիսյանի նախագահությամբ տեղի ունեցավ հոգեհանգստյան կարգ՝ 1988 թվականի փետրվարի 27-29-ը Սումգայիթում ադրբեջանցիների կողմից վայրագորեն սպանված հայերի հիշատակը ոգեկոչելու համար:

Արարողությանը ներկա էին Ռուսաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանը, Ղարաբաղի հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանը, Մոսկվայի հայ դաշնակցական կազմակերպության, Ռուսաստանի հայ կանանց միության ներկայացուցիչներ, տարբեր համալսարաններում սովորող ուսանողներ, Սումգայիթ քաղաքի նախկին բնակիչներ:

«Այսօր եկել ենք ցույց տալու մեր հավատարմությունն ու նվիրումն այն արժեքներին, որի համար ապրել են մեր նախնիները: Մեծ են եղել մեր ազգի կորուստները: Ապրեցինք եղեռն, եւ շարունակությունը եղավ Սումգայիթը: Այսօր ժամանակն է ոչ թե սգալու, այլ արժանապատիվ ապրելով՝ որպես ճշմարիտ քրիստոնյաներ, մեր արդար իրավունքի պահանջատերը լինելու: Այսօր առավել, քան երբեւէ մեզ անհրաժեշտ է համերաշխություն ու միաբանություն: Թող Աստված զորացնի մեզ սիրո մեջ, որպեսզի կարողանանք լինել միաբան եւ հավերժացնել Սումգայիթի անմեղ զոհերի հիշատակը»,- ասաց սրբազան հայրը:

Ռուսաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Օլեգ Եսայանի խոսքով՝ Սումգայիթի դեպքերը չկոտրեցին հայի կամքն ու վճռականությունը, այլ ավելի ամրապնդեցին: Դեսպանի կարծիքով, երբ խաղաղարար ճանապարհով լուծվի Արցախի հիմնախնդիրը, կպատժվեն նաեւ Սումգայիթի ոճրագործները:



*Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի մամլո դիվան*

## Վրաստանի ավանդական կրոնական համայնքների առաջնորդների հանդիպումը Վրաց Ուղղափառ եկեղեցու պետի հետ



Փետրվարի 23-ին Վրաստանի ավանդական կրոնական համայնքների առաջնորդները՝ Հայ Առաքելական եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Տ. Վազգեն եպս Միրզախանյանը, Հռոմեական Կաթոլիկ եկեղեցու վարչական ղեկավար Ջուզեպպե եպս Պազոտոն, Ավետարանական-Մկրտական եկեղեցու ներկայացուցիչ Իլիա Օսիպաշվիլին, Լյութերական եկեղեցու առաջնորդ Հանս Յոահիմ Կիդերլենը եւ իսլամ ազգաբնակչության ախունդ Ալի Ալիեւը, Վրաց Ուղղափառ եկեղեցու պատրիարքարանում հանդիպեցին Իլիա Բ Համայն Վրաստանի պատրիարքի հետ:

Հոգեւոր առաջնորդները Վրաց պատրիարքին ներկայացրին ավանդական կրոնական համայնքներին իրավաբանական կարգավիճակ տրամադրելու հիմնահարցը՝ հայցելով պատրիարքի միջնորդությունը եւ օժանդակությունը՝ խնդրի լուծման համար:

Իլիա Բ Պատրիարքը, լսելով կրոնական առաջնորդների կողմից առաջ քաշած հարցը, հանձնարարեց պատրիարքարանի իրավաբանին՝ կրոնական առաջնորդների եւ հասարակական կառույցների հետ միասին աշխատել խնդրի առնչությամբ եւ առաջարկություն ներկայացնել պետական համապատասխան մարմիններին:

Հանդիպմանը եղան տարբեր առաջարկություններ, սակայն կրոնական համայնքների ներկայացուցիչները պնդեցին, որ հարկավոր է Վրաստանում գործող ավանդական կրոնական համայնքներին տալ հանրային իրավունքի կարգավիճակ:

Նման հանդիպում վերջերս կայացել էր նաեւ Վրաստանում հավատարմագրված դեսպանների հետ, որի ժամանակ հոգեւոր առաջնորդները դիվանագետների ուշադրությանը ներկայացրին տարիներով չարչրկված կարգավիճակի եւ սրբավայրերի վերադարձի հարցերը՝ խնդրելով նրանց աջակցությունը:

***Վիրահայոց թեմի մամլո դիվան***

# ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՎԱՐԱՅՐԻ ԴԱՍԵՐԻ ՇՈՒՐՋ

Այսօր ամենուրեք, ուր հայ կա ու Հայ Եկեղեցի, անսահման երախտագիտությամբ տոնախմբում են հիշատակը «Սրբոց Վարդանանց զօրավարացն մերոց՝ 1036 վկայիցն, որք կատարեցան ի մեծ պատերազմին»:

Խոսքը Ավարայրի հերոսամարտի մասին է, ուր «նորահրաշ պսակաւորների հեղուած վարդագոյն արեամբ» մեկօրյա հերոսամարտն իրավամբ դարձավ հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու պատմության՝ պանծալի եւ հավերժ հիշատակության արժանի



ոսկյա էջերից մեկը: Վարդանանց ոգին էր, որ ի զեն կոչեց ողջ միջնադարի հայ ազատագրական պայքարի մասնակիցներին, գոտեպնդեց նաեւ Սարդարապատի եւ մերօրյա արցախյան խիզախ ու անմեռ հերոսներին, որոնք «իմացեալ մահով» Արցախ աշխարհը ազատագրեցին գերությունից՝ ապահովելով նրա անկախ ու ազատ ապրելու իրավունքը:

Այս խոհերով ու մտածումներով անդրադառնանք 5-րդ դարին, որը հայերիս համար դարձավ հրաշքների եւ պատմական մեծագույն սխրանքների դարաշրջան: Հիշենք, որ դարսկզբում՝ 405 թվականին, ձեռամբ սուրբ Մեսրոպ Մաշտոցի ստեղծվեցին հայոց գիրն ու գրականությունը, հանգամանք, որ լուսավորեց հայ ժողովրդին, ազատեց մեզ ասորա-հելլենական նսեմացուցիչ ազդեցությունից: Չմոռանանք, որ հենց այդ սքանչելագործ հայ գիրն ու փառապանծ մեր Ս. Եկեղեցին էին, որ ապահովեցին նաեւ Սասանյան Պարսկաստանի եւ նենգ Բյուզանդիայի լծի տակ տառապող հայ ժողովրդի միասնականությունը՝ հաստատուն պահելով նրան ձուլման եւ օտարացման վտանգից: Մի՞թե աստվածային հրաշք չէր հայոց գիրը, որով ազգայնացավ հայոց մշակույթը, եւ Հայոց եկեղեցիներում Աստծո պատգամը հայ մարդուն լսելի դարձավ՝ արդեն ժողովրդին հարազատ ու հասկանալի հայերեն:

Առաջին հրաշքին հաջորդեց երկրորդը: Սահակ Հայրապետի եւ նրա թարգմանիչ աշակերտների հոգածո բծախնդրությամբ՝ Աստվածաշունչ սրբազան մատյանը թարգմանվեց հայերեն, եւ հետագա երախտագետ սերունդները հաստատեցին, որ հայացած Աստվածաշունչն այնպիսի տաղանդով է թարգմանվել, որ եթե գրականագիտական իմաստով դիտարկելու լինենք, հպարտորեն ու միանշանակ պիտի ասենք, որ այդ թարգմանությունը հիասքանչ է ու անկրկնելի: Պատահական չէ, որ այն անվանվեց «Թագուհի թարգմանութեանց»:

5-րդ դարի երրորդ հրաշքը մեզ համար այն էր, որ հայոց գրերի գյուտն արդեն քաղաքական հողի վրա շարունակեց այն, ինչը կատարվել էր մշակույթի բնագավառում: 451 թվականի մայիսի 26-ին հայ ժողովուրդն իջավ Ավարայրի դաշտ՝ փառապանծ Հայկ Նահապետի խիզախումով, սուրբ Գրիգոր Լուսավորչի քրիստոնեական խոր ու անսասան հավատքի համոզումով պաշտպանելու մեր նվիրական սրբությունները ու Հայրենիքը, ազգային արժանապատվությունն ու ամենակարեւորը՝ հայոց անկոտրում եւ սրբազան ոգին: Ավարայրի դաշտում «գիտակցված մահով» ընկած հայորդիների կատարածը խոնարհում եւ հիացում պատճառեց մեր ժողովրդի՝ հաջորդ բոլոր սերունդներին: Իմացյալ նահատակությամբ, հանուն Քրիստոսի եւ Հայրենիքի սիրո, Տղմուտ գետի ափին մարտական փղերի դեմ կռիվ տված հերոսների զոհաբերությունն արթնացրեց ժողովրդի ներքին այն ուժերը, որոնցով նա կարողացավ դարերի հոլովույթում պաշտպանել մեր Սուրբ Եկեղեցին ու քրիստոնեական արժեքները, ոսկեղենիկ մեր լեզուն, եւ իհարկե, մեր ազգային անաղարտ դիմագիծը: Համոզված ենք, որ քրիստոնեական կեցվածքը, առ Աստված մեր ճշմարիտ հավատքը, շաղախվելով ազգային ինքնագիտակցությանը, հային պահեցպահպանեց մեր պատմության փոթորկալից բոլոր ժամանակներում:



Մեր մշակույթի մեծերից ակադեմիկոս Մանուկ Աբեղյանը Ավարայրի ներքին խորհրդի մասին իր «Հայոց հին գրականության պատմության» մեջ իրավացիորեն գրում է. «Դա կռրովի անվեհեր դիմագրավում էր մահվան, հանուն գաղափարի, հանուն խորին համոզումի, մանավանդ երբ այդ կապված է Հայրենի աշխարհի ու ժողովրդի շահերի հետ: Արի անձեր էին հարկավոր քաջալերելու համար»:

Հազարամյա մեր պատմության մեջ, երբ ազգի համար ստեղծվել են օրհասական վիճակներ, երբ ամեն անգամ դամոկլյան սրի նման մահացու վտանգն է կախվել մեր ժողովրդի գլխին, մեր քաջարի նախնիք մեկ բռունցք դարձած դիմագրավել են օտարին եւ Վարդանաց օրինակով պաշտպանել մեր հայրենին ու մեր սրբությունները:

Հիշենք, որ Վարդան Մամիկոնյանի բանակը, նույնիսկ երբ կորցրեց սիրելի սպարապետին, պահեց իր քաջարի ոգին ու չընկրկեց: Այդ Ոգին շուրջ 30-տարի ընդմիջումներով՝ մեծ ու փոքր ճակատամարտեր տվեց Ներսեհապատի, Ակոռիի, Երեզ գյուղերի մոտ եւ տոնեց իր **հաղթանակները**...

484 թ. Պարսկաստանում սպանվեց Պերոզ թագավորը, եւ նրան հաջորդեց եղբայրը՝ Վաղարշը (484-491) թթ.: Ապստամբ հայ ժողովրդի տարած հաղթանակներից հետո Սահակ Բագրատունու գլխավորությամբ Դվինում նոր Հայ կառավարություն կազմվեց: Վահան Մամիկոնյանը հռչակվեց հայոց սպարապետ: Ողջ ավագանին եւ ժողովուրդը Ս. Ավետարանի վրա երդվեց, որ մինչեւ կատարյալ եւ վերջնական հաղթանակ պիտի կռվի՝ հույս չդնելով ո՛չ հույների եւ ո՛չ էլ հոների ռազմական օգնության վրա:

*Շարունակությունը՝ էջ 7*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

## ՀԱԿՈԲ Դ ՋՈՒՂԱՅԵՑԻ
## (1655-1680)

*Սկիզբը՝ էջ 3*

Սարգիս Թեքիրտաղցին, վտանգ զգալով Թութունչու կողմից, ինքն էլ գնաց Ադրիանուպոլիս՝ իրեն պաշտպանելու համար: Այդ ժամանակ էլ հայտնվեց Եղիազարը, որպեսզի լուծի իր հարցերը եւ հաստատվի Երուսաղեմում: Մեծ վեզիրը խնդիրների այդ թնջուկը պետք է լուծեր: Նրա վրա ազդում էր Աբրոն, որ Եղիազարի պաշտպանն էր եւ վեզիրի ավագ պաշտոնյան: Նա կաշառվել էր Կաֆացու կողմից՝ ընդդեմ Եղիազարի: Ատյան հրավիրվեց, եւ չնայած բողոքներին՝ Եղիազարի կաթողիկոսությունը հաստատվեց, բայց հաստատվեցին նաեւ Աստվածատուրի պատրիարքությունը եւ Մարտիրոսի փոխանորդությունը Երուսաղեմի վրա: Մարտիրոսը, դրանից գոհ, հրամանագրերով գնաց Երուսաղեմ, սակայն Եղիազարը դժգոհ մնաց, քանի որ առանց Երուսաղեմի նրա կաթողիկոսությունը ոչինչ չարժեր: Հովհաննեսի եւ Սարգսի հարցում Եղիազարն ու Աբրոն դուրս եկան Սարգսի դեմ, կաշառքներ տրվեցին, եւ Հովհաննեսը կրկին հաստատվեց պատրիարքական աթոռին: Այս ամենը տեղի ունեցավ 1665 թվի մայիսի վերջերին:



Հակոբ կաթողիկոսը, Կաֆացուն ուղարկելուց հետո, Սահակ Մակվեցի եպիսկոպոսին աթոռակալ ու տեղապահ նշանակելով, շարժվեց դեպի Եվդոկիա, բայց Օնոփրիոսի կողմնակիցների առաջ բերած բարդությունների պատճառով ստիպված եղավ վերադառնալ Էջմիածին: Կաֆացու ետ գալուց հետո նա փութացրեց իր ուղեւորությունը՝ տեղապահ թողնելով Մատթեոս եպիսկոպոսին: Ճամփորդության նպատակակետը Կ. Պոլիսն էր, սակայն սկզբում գնաց Զմյուռնիա: Այդ ժամանակ մեծ վեզիրն արձակել էր իր հրովարտակները, իսկ Մարտիրոսը գնացել էր Երուսաղեմ: Այստեղ նա հրավեր ստացավ Աստվածատուրից եւ Մարտիրոսից, որ գնա Երուսաղեմ եւ միասին խորհեն, թե ինչպես տապալեն Եղիազարի կաթողիկոսությունը, ինչն այլեւս դժվար չէր դիտվում: Նա որոշեց գնալ Երուսաղեմ եւ ամենուրեք համակրանքի արժանացավ: Եղիազարն Աբրոյի միջոցով փորձ արեց Երուսաղեմի պատրիարքության հրովարտակն ստանալ, սակայն Քյոփրյուլիօղլուն չհամաձայնեց, քանի որ Աստվածատուրին պաշտպանում էր իր ավագ պաշտոնյան: Դա ստիպեց, որ եղիազարականները բավարարվեն միայն օսմանյան երկրների կաթողիկոսությամբ: Սակայն Եղիազարը դրան դեմ էր՝ ասելով, թե որտե՞ղ պետք է հաստատի իր կաթողիկոսությունը: Աբրոն, չուզենալով գրգռել մեծ վեզիրին, որն իր հրովարտակը փոխելու միտք չուներ, բավարարվեց «նազր» եւ «մյութեւելլի» կոչումներով, որոնք բավական էին Երուսաղեմի ստացվածքներին ու մատակարարմանը տիրանալու եւ Աստվածատուրի պատրիարքությունն ի դերեւ դարձնելու համար: Եղիազարը դրան համակերպվեց, քանի որ վախենում էր, որ իր բացակայության ժամանակ կարող են թաքցրած դրամները գտնել, եւ վերցնելով հիշյալ հրովարտակները՝ շտապեց Ադրիանուպոլսից գնալ Ռոդոստո, Բուրսա եւ այնտեղից էլ՝ Երուսաղեմ: Բայց նրա հակառակորդները՝ Թըլթըլյաններն ու Ջահուկյանները, Բարձր դռանը բողոքեցին, թե նրա դեմ դատ ունեն: Ուստի նրան ձերբակալեցին՝ իր հետ եղած երկու վարդապետներին նույնպես, որոնց հետո բերեցին Կ. Պոլիս: Սակայն Կ. Պոլսում Եղիազարի կողմնակիցները կարողացան ազատել նրա հետ ձերբակալված վարդապետներին եւ հերքել Եղիազարի վրա բարդված մեղադրանքները: Եղիազարը, որին Բուրսայի կուսակալն ազատել էր, եկավ Կ. Պոլիս եւ քարոզների շնորհիվ մեծ ժողովրդականություն վայելեց: Սկզբում նա հաստատվել էր Ղալաթիայի Սբ Լուսավորիչ եկեղեցում, իսկ հետո տեղափոխվեց Սամաթիայի եկեղեցի, որը հայաշատ կենտրոն էր: Եղիազարը հույս ուներ, որ Երուսաղեմի հարցը կլուծի, սակայն Հովհաննես Թութունչին կառավարությանը բողոքեց՝ պահանջելով, որ Եղիազարին հեռացնեն, քանի որ բոլոր օգուտները նրան էին գնում: Եղիազարն ստիպված էր հեռանալ, եւ այս անգամ Աբրոն նրան հյուրընկալեց իր տանը եւ կառավարությանը համոզեց, որ Եղիազարին պատրիարքությունը չի հետաքրքրում, այլ կաթողիկոսությունը եւ Երուսաղեմի խնամակալությունը: Այս տեղի ունեցավ 1665 թվի երկրորդ կեսին:

*Շարունակելի*

***Բաբկեն ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,***
***պրոֆեսոր***

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ԵՎ ԽԱՐՈՒՅԿԸ

*Այսօր շատերին է հետաքրքրում, թե ինչ կապ ունի խարույկը Տյառնընդառաջի տոնի հետ:*

Նախ՝ համառոտակի անդրադառնանք խարույկի, այսինքն՝ կրակի, բոցի ընդհանրական խորհրդանիշներին:

Կրակը, բոցը հնագույն ժողովուրդների մշակույթում ունեցել են արեւի, աստվածային էներգիայի, մաքրագործության, այլակերպության, վերածննդի, հոգեւոր սլացքի, գայթակղության, փառասիրության, ոգեշնչումի խորհրդանիշ: Կրակը նաեւ ընտանիքի պահպանման, համերաշխության ու ջերմության խորհուրդ ունի: Ուստի պատահական չէ, որ արեւելյան շատ ժողովուրդների մոտ կրակը, կրակատեղին՝ օջախը, դարձել են ընտանիք հասկացության հոմանիշը:

Կրակն իր վերոհիշյալ խորհրդանիշների կողքին ունեցել է նաեւ կործանարար գերուժի արտահայտություն: Վաղնջական ժամանակներում կրակին վերաբերվել են որպես աստծու, իսկ հետագայում՝ աստվածային զորության, արեւի երկրային մարմնավորման: Քանի որ կրակն ունի սնվելու, աճելու, մեռնելու եւ ապա վերածնվելու հատկություն, կրակապաշտները նրան համարել են կենդանի գոյություն, մեռնող եւ հարություն առնող էություն:

Հետաքրքիր է, որ շատ ժողովուրդներ սրբացրել են նաեւ իրենց տարածքներում գտնվող այն լեռները, որոնք հրաբխային ծնունդ են եղել:

Ալքիմիայում կրակը, որի գրաֆիկական պատկերանշանը եռանկյունին է, համարվել է այն անփոփոխ էությունը, որն իրենով միավորում է մնացյալ երեք տարրերը՝ հողը, ջուրը, օդը:

Կրակը՝ որպես աստվածային հայտնության խորհրդանիշ, ոչ պակաս դերակատարություն է ունեցել հրեական մշակույթում, իսկ քրիստոնեության մեջ այն ընկալվեց նաեւ որպես Սուրբ Հոգու մարմնավորում, որպես մաքրագործության, հոգեւոր վերելքի ու նվիրումի, իսկ կերպարվեստում՝ բարեպաշտների ու հավատքի մեծագույն փորձության նշան: Միջնադարյան գեղանկարչության մեջ հաճախ կարելի է հանդիպել սրբերի պատկերների, որտեղ նրանք ներկայացված են բոցավառվող սրտերով: Կաթոլիկ եկեղեցում, ինչպես նաեւ Բյուզանդականում, կրակը՝ որպես հարության խորհրդանիշ, նույնացվել է փյունիկ առասպելական թռչնի (կրակից վերստին հառնող) եւ սալամանդր կենդանու (կրակի անմահ ոգի) հետ: Այսօր էլ Կաթոլիկ եւ Ուղղափառ Եկեղեցիներում զատկական տոնի արարողության ժամանակ հանդիսավորապես մարում եւ վերստին «նոր կրակով» վառում են ծիսական մոմերը՝ որպես Տիրոջ հարության խորհրդանիշ:

Իսկ հիմա անդրադառնանք Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում Տյառնընդառաջի տոնի նախօրին՝ երեկոյան ժամերգությունից հետո, վառվող խարույկին, որի ավանդույթը մեր Եկեղեցում սկզբնավորվել է Լուսավորչի ժամանակներից:



Հայաստանում խարույկը՝ որպես կրակի, լույսի ու արեգակի խորհրդանիշ, մեծ տարածում է ունեցել հնդկա-իրանական Միթրաս (Միհր) աստվածությանը նվիրված ժողովրդական տոնակատարությունների ժամանակ: Այս աստվածության պաշտամունքը Հայաստան էր ներթափանցել հռոմեացիների միջոցով: Ըստ Պլուտարքոսի՝ Միթրասի պաշտամունքը Հռոմ էր անցել Պոմպեոսի գերեվարած կիլիկեցի ծովահենների միջոցով, որն էլ հետագայում տարածվել էր Հռոմեական ողջ կայսրության մեջ՝ միաձուլվելով մինչ այդ եղած արեգակի պաշտամունքին: Մ. թ. 3-րդ դարում, երբ կայսրության տարածքում գործում էին արդեն քրիստոնեական բավականին հոծ համայնքներ, Միթրասի պաշտամունքը դեռեւս լրջորեն նստած էր ժողովուրդների գիտակցության մեջ:

Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելուց հետո Եկեղեցին ստիպված էր հեթանոսական շատ սովորություններ խորհրդով մոտեցնել քրիստոնեականին եւ ներառել ծիսակարգերում, այդ թվում նաեւ՝ կրակի խորհուրդը: Միթրասի ծննդյան օրը համարվում էր դեկտեմբերի 25-ը եւ տոնվում էր մեծ շուքով: Սա էր պատճառը, որ հետագայում Կաթոլիկ եւ Ուղղափառ Եկեղեցիները, մոռացության տալու համար այս աստծուն, Տիրոջ ծննդյան օրը, որ նախապես քրիստոնեական բոլոր եկեղեցիները տոնում էին հունվարի 6-ին, տեղափոխեցին դեկտեմբերի 25-ը: Ռուս Ուղղափառ Եկեղեցին տոնում է հունվարի 7-ին, այսինքն՝ կրկին դեկտեմբերի 25-ին, բայց հին տոմարով:

Միթրասի կամ Միհրի պաշտամունքը տարածում գտավ նաեւ հեթանոսական Հայաստանում՝ փոխարինելով հայերի արեւի աստված Տիրին: Թեեւ մեր հեթանոս նախնիները Տիրին արդեն նոր դեր էին վերագրել՝ դարձնելով Արամազդի դպիրը, ուստի եւ գիր ու գրականության, գիտության ու մշակույթի հովանավորը, այնուհանդերձ, ժողովրդի մոտ պահպանվել էր նրա տոնին խարույկներ վառելու, շուրջը տոնախմբություններ կատարելու սովորությունը: Հավանաբար այդ տոնախմբումները տեղի էին ունենում փետրվարի կեսերին:

Ըստ Եկեղեցու հայրերի՝ Գրիգոր Լուսավորիչը, այս խարույկը վերաիմաստավորելով քրիստոնեական կրակի, հրի՝ ավետարանական խորհուրդներով, հարմարեցրեց Տյառնընդառաջին՝ քառասնօրյա Տիրոջը տաճարին նվիրաբերելու տոնին: Սակայն պետք է նշել, որ մեր ժողովրդի մոտ այսօր էլ պահպանվել են հեթանոսական շրջանից մնացած որոշ սովորություններ, այն է՝ խարույկի վրայից թռչելը, շուրջը պտտվելը, կրակը կոխոտելը, ծխով գուշակություններ անելը, որոնք խոտելի են եւ Եկեղեցու կողմից մերժված:

Ստորեւ ընթերցողին ենք ներկայացնում մեր Եկեղեցու մեծագույն հայրերից մեկի՝ Գր. Տաթեւացու մեկնությունները՝ Տյառնընդառաջի խարույկի վերաբերյալ՝ **Ասողիկ քհն. Կարապետյանի** թարգմանությամբ:

**«Իսկ ինչո՞ւ ենք կրակ վառում:**

***Նախ***՝ որովհետեւ [երբ] Տերը տաճարին մոտեցավ, դուռն ինքնիրեն բացվեց, մեծ ճայթում եղավ, եւ քաղաքը տիեզերքի օրինակով դղրդաց: Եվ բոլորը վառած լույսերով եկան տաճար՝ Տիրոջն ընդառաջ եւ ասացին. «Տերն անցավ այս դռնով»: Ուստի այդ օրվա տոնն անվանվեց «Տեառնընդառաջ», «Տերն ընդ այս», որն աղավաղելով ասում ենք՝ «Տեր ընդ ես»: Եվ մենք դրա համար նույն օրինակով՝ հուր ու ջահ վառած, Տիրոջ [տաճար] գալստյան նախատոնակն ենք կատարում:

**Երկրորդ**՝ հեթանոսները բոլոր արարածներին էին պաշտում, առավելապես հրին, ինչպես պարսից ազգը: Այժմ էլ՝ հյուսիսային կողմերում շատերն են կրակապաշտներ: [Ուստի] դրա համար մենք վառած հուրն ընծայում ենք ի պատիվ Աստծո, թե՝ «Դո՛ւ ես ճշմարիտ Աստված, որ այժմ երեւացիր», իսկ հուրն աստված չէ, այլ Քո արարածը: Դրա համար քեզ ծառայություն ենք բերում, ինչպես որ եբրայեցի մանուկները՝ ծառերի ոստերն ընծայեցին ի պատիվ Քրիստոսի (հմմտ. Մատթ. ԻԱ 8), որովհետեւ Նա է ճշմարիտ Աստված, նույնպես եւ մենք հուրն ենք ընծայում:

*Շարունակությունը՝ էջ 8*

## Գեղարդավանքի երգչախմբի համերգները Գերմանիայում



Փետրվարի 14-21-ը Սբ Գեղարդավանքի երգչախումբը (գեղ. ղեկավար՝ Միեր Նավոյան, խմբավար՝ Անահիտ Պապայան)՝ գլխավորությամբ Սբ Գեղարդավանքի վանահայր Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանի, համերգներով հանդես եկավ Գերմանիայի Հայդենհայմ, Շտուտգարտ, Գյոպինգեն եւ Հանաու քաղաքներում:

Սա երգչախմբի հինգերորդ այցն էր Գերմանիա՝ Գեղարդավանքի եւ Գերմանիայի Լորշ վանք-գիտահետազոտական ինստիտուտի համագործակցության շրջանակներում: Երգչախումբը գերմանացի ունկնդրին ներկայացրեց հայ հոգեւոր եւ ժողովրդական երգերի մշակումներ:

Առաջին համերգը կայացավ Հայդենհայմ քաղաքի Ս. Միքայել եկեղեցու լեփ-լեցուն սրահում: Երգչախմբի գերմանացի բարեկամ, երաժիշտ Քրիստիան Վայդայի կողմից կատարվեց նաեւ համերգի պրոֆեսիոնալ ձայնագրություն: Համերգը կազմակերպել էր «Neuer Kammerchor» երիտասարդական երգչախումբը՝ Թոմաս Քամմելի ղեկավարությամբ: Այս երգչախմբի հետ «Շիլլեր գիմնազիումի» փորձասրահում տեղի ունեցավ հանդիպում-փորձ, որի ընթացքում Ա. Պապայանի խմբավարությամբ գերմանական երգչախմբի երիտասարդ անդամները սովորեցին Կոմիտասի՝ «Ելա տանիս» ժողովրդական երգի մշակումը: Այնուհետ «Neuer Kammerchor»-ի անդամները կատարեցին Ռ. Ամիրխանյանի «Երազի իմ երկիր» ստեղծագործությունը, որը սովորել էին դեռ անցյալ տարի՝ Հայաստան կատարած համերգային ուղեւորության ժամանակ:

Հատկապես նշանակալի էր տարբեր երկրներից ժամանած երգչախմբերի համատեղ համերգը Շտուտգարտում, որի ընթացքում հայկական երգչախմբին տրված էր առավելագույն տեւողությամբ ելույթի հնարավորություն: Ուշագրավ էր միացյալ երգչախմբի՝ Յ. Ս. Բախի «Singet dem Herrn» ստեղծագործության մի հատվածի կատարումը՝ նշանավոր դիրիժոր Հելմուտ Ռիլլինգի ղեկավարությամբ: Վերջինս բարձր գնահատեց հայաստանյան խմբի կատարումները:

Գյոպինգեն եւ Հանաու քաղաքներում երգչախմբին ջերմորեն հյուրընկալեցին տեղի հայ համայնքները՝ Տ. Սերովբե վրդ. Իսախանյանի եւ Տ. Տիրատուր քհն. Սարդարյանի գլխավորությամբ: Փետրվարի 19-ին Գյոպինգենում, իսկ փետրվարի 20-ին Հանաուում մատուցվեց Պատարագ՝ Գեղարդավանքի երգչախմբի մասնակցությամբ: Պատարագիչն էր Տ. Հարություն աբեղա Կիրակոսյանը:

*Լրատվական նյութերը՝*
*ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ*

## ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՎԱՐԱՅՐԻ ԴԱՍԵՐԻ ՇՈՒՐՋ

*Սկիզբը՝ էջ 5*

Այս անցքերի ականատեսն էր Հովհաննես Ա Մանդակունի Հայրապետը (478-490) թթ.: Նա Դվինի Մայր եկեղեցում գոհաբանական աղոթք բարձրացրեց առ Աստված, որի ավարտին ինքն անձամբ երգեց Սաղմոսի 29 գլխի 11 եւ 12 համարները, ուր ասվում է. «Լսեց ինձ Տերն ու ողորմեց, Տերը եղավ իմ օգնականը: Սուգս դարձրեց ուրախություն, հանեց քուրձն իմ եւ խնդություն հագցրեց ինձ»:

Այժմ փորձենք պատասխանել այն հարցին, թե հայ ժողովուրդը Վարդանանց պատերազմում բարոյական հաղթանակ տարա՞վ, թե՞ պարտվեց: Վստահ ենք, որ շատերը կասեն՝ հայ ժողովուրդը տարավ բարոյական հաղթանակ:

Թե ինչ է նշանակում բարոյական հաղթանակ, այս դեպքում, կարծես, այնքան էլ հասկանալի չէ, եթե հաշվի առնենք այն ձեռքբերումները, որ հետեւեցին Վարդանանց եւ Վահանանց մղած պատերազմներին: Պարսից Վաղարշ թագավորի խնդրանքով՝ 484 թ. Նվարսակում հայերը ներկայացրին երեք պահանջ, որոնք ընդունվեցին միաձայն.

**ա.** քրիստոնեությունը ճանաչվեց որպես Հայաստանի պաշտոնական կրոն,

**բ.** Հայաստան երկրի կառավարումը վերստին հանձնվեց հայ ավագանուն,

**գ.** Հայաստանում պետական պաշտոնյաներ նշանակվեցին միմիայն հայ տոհմիկ ավագանուց:

Սրանք բարոյական հաղթանակ չէին եւ ոչ էլ՝ պարտություն: Նվարսակում հայ ժողովուրդը փաստեց իր հաղթանակը մարտի դաշտում եւ հաստատեց պայմանագրով:

Փառք Ավարայրի եւ Վահանյան ապստամբության հերոսներին, որոնք իրենց թափած արյամբ եւ հաղթանակներով հավերժացրին մեր ընթացքը գալիք բոլոր դարերում:

Հայ ժողովուրդը 451-484 թթ. մղած պատերազմներով ապահովեց իր ֆիզիկական ու հոգեւոր գոյության անշրջելի հաղթանակը:

***Տ. Եղիշե ավ. քհն. ՍԱՐԳՍՅԱՆ***

*Սկիզբը՝ էջ 6*

**- «Եվ հաջորդ օրը, երբ դուրս էր գալիս այնտեղից, իջեւանատիրոջը երկու դահեկան հանեց տվեց եւ ասաց. «Խնամի՛ր նրան եւ ինչ որ ծախսես դրա վրա, Իմ մյուս անգամ գալուն կհատուցեմ քեզ» (Ղուկ. 35):**

- «Դուրս գալը» Քրիստոսի համբարձվելն է, իսկ «իջեւանատերը» Եկեղեցու պետն է, ում Հիսուսը հանձնում է արդեն բուժված վիրավորին: «Երկու դահեկանը» Աստվածաշնչի Հին եւ Նոր Կտակարաններն են, որոնցով Եկեղեցու պետերը եւ քահանաները պիտի կրթեն եւ դարմանեն Քրիստոսի եկեղեցին՝ աստվածային սիրո մեջ: «Մյուս անգամ գալուն», որ անկասկած Տիրոջ երկրորդ գալուստն է, Քրիստոսը պիտի հատուցի յուրաքանչյուրին՝ իր խնամքի դիմաց, եւ վա՜յ նրանց, ովքեր ծուլացել են վիրավորվածներին դարմանելու մեջ:

**- Ըստ Պողոս պատրիարք Ադրիանուպոլսեցու՝ «Մարդու բնությունը բարեկամության կարիք ունի՝ թե՛ ուրախության, թե՛ տրտմության մեջ, որովհետեւ բարկամների ընկերակցությամբ ուրախությունը մեծանում է, իսկ տրտմությունը՝ բարեխառնվելով նվազում... եւ ով որ չգիտի՝ ինչ է բարեկամությունը, նա չգիտի, թե ինչ է մարդն առհասարակ»:**

**Տե՛ր հայր, ո՞րն է իսկական բարեկամությունը՝ քրիստոնեական բարոյականության չափանիշներով:**

- Աստվածաշնչի բարիքը քրիստոնյա ժողովրդին այն է, որ ողջ կյանքի ընթացքում շարունակաբար սնվելով՝ զորացնում է մարդու հոգին եւ մղում բարիքի, ճշմարտության ու առաքինության: Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որեւէ մեկին չի սրբացրել կենդանության օրոք: Ինչո՞ւ: Որովհետեւ ամեն մարդ ենթակա է չարի հարձակումներին եւ գայթակղության: Մյուս կողմից՝ անհավատ եւ մեղավոր կյանքով ապրող մեկը հանկարծ կարող է դառնալ դեպի Աստված եւ մեծ վաստակ ունենալ սրբության ու աստվածպաշտության մեջ: Քրիստոսի Եկեղեցու սրբացված անձանց ցանկում այսպիսիներն էլ քիչ չեն: Եվ ինչպես Պողոս առաքյալն է ասում. «Նայելով նրանց (ձեր հավատքի առաջնորդների) կյանքի ընթացքի վախճանին, հետեւո՛ղ եղեք նրանց հավատին» (Եբր. ԺԳ 7), նույնպես եւ Հայ Եկեղեցին «սպասում էր», որ ընթացքի վախճանով վավերական դառնար մարդու սուրբ կյանքը, երբ արդեն մահականացուն կնքված էր լինում, եւ այլեւս անփոփոխելի էր: Սուրբ վարդապետները հորդորում են ահով եւ դողով մեր անձերի փրկությունը գործել: Այսինքն՝ երբեք չպետք է բավարարվել արած բարի գործերով՝ մտածելով, թե ահա ես արել եմ այն, ինչ Աստված ինձնից պահանջում էր: Ո՛չ, երբեք բավական չէ: Գիտե՞ք՝ շարունակաբար առաքինագործելու համար հարկ է, որ հաճա՛խ հիշենք բուն առաքինության գործերը: Օրինակ՝ մեր տեսադաշտից երբեմն վրիպում են ինչ-ինչ առաքինություններ՝ ողորմություն, հիվանդներին այցելություն եւ այլն. առօրյա հոգսերով ենք պատճառաբանում: Սա ճիշտ վիճակ չէ: Եվ երբ, առօրյա հոգսերի մեջ խճճված, Աստծու խոսքն ենք լսում, որը մեզ հանդիմանում է՝ «միայն քո անձի մասին ես մտածում» ասելով, մի պահ սթափվում ենք, հիշում ենք առաքինության գործերը: Այնինչ՝ հաճախ պիտի հիշենք, չէ՞ որ դրանք երբեմն առանձին ջանք էլ չեն պահանջում. մի քաղցր խոսք, մի ժպիտ, սրտացավ մի խորհուրդ ընկերոջը, որ այդ պահին դրա կարիքն ունի, ինչը մենք անտեսում ենք, զլանում: Այս դեպքերում Աստծու՝ անգամ հանդիմանության նման հնչած խոսքը սնունդ, օրհնություն ու զորություն է բոլորիս համար՝ ե՛ւ քարոզողների, ե՛ւ լսողների: Գիտե՞ք՝ Սուրբ Հոգին հանդիմանում է մեզ, երբ բաց ենք թողնում բարին գործելու առիթը: Չկա մեկը, որ նման առիթներ բաց թողած չլինի: Ո՞ր մեկիս խղճի վրա ծանրացած չեն օգնություն հայցող աչքեր, որոնք անտեսվեցին, բայց չմոռացվեցին: Եվ ամեն անգամ, երբ անտեսում ենք, հետո Աստծու Հոգին մի տեսակ տրտմություն է բերում մեր սրտին, եւ մեր հոգին հառաչում է՝ ափսո՜ս, որ կորցրի այս պատեհությունը. միգուցե այլեւս նման առիթ չլինի: Սամարացին անցավ, տեսավ արնաքամ մարդուն (ի դեպ, վիրավորը հրեա էր), եւ լավ է, որ անտարբեր չանցավ. միգուցե նման առիթ այլեւս չունենար: Ուրեմն՝ ո՞վ է մեր ընկերը: Յուրաքանչյուր մարդ, ով մեր օգնության կարիքն ունի՝ անկախ մաշկի գույնից, դավանանքից... անկախ ամեն ինչից:



**- Տե՛ր հայր, ո՞րն է առակի բարոյական եւ հավերժական իմաստը յուրաքանչյուրիս համար:**

- Հավերժականը Տիրոջ այն պատվիրանն է, որով սկսեցինք մեր զրույցը. «Պիտի սիրես քո ընկերոջը, ինչպես քո անձը»: Աշխարհով ինչ էլ որ անցնի, ինչպիսի քաղաքակրթություն էլ լինի, այս պատվիրանը չի փոխվի երբեք: Սա աստվածատուր եւ վերժամանակյա պատվիրան է: «Պիտի սիրես քո ընկերոջը քո անձի պես». սա Աստծո՛ւ պահանջն է մարդուց: Եվ որչափ եսակենտրոնության գնդանում խարխափող մարդը, այդ գնդանի պատը խորտակելով, կարողանա դուրս գալ այնտեղից, կարողանա գործել նաեւ այլոց բարիքի համար, այնչափ իր վարձքը մեծ պիտի լինի երկնքում: Որովհետեւ Քրիստոսն Ինքը մեծամեծ շնորհներով պարգեւում է եւ երբեք չի անտեսում բարի գործ անողին, ինչպես որ ասաց. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ՝ Ինձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ 40): Ուրեմն նմանվենք «սամարացի» Քրիստոսին, որ սեղան էր նստում մաքսավորների ու մեղավորների հետ՝ ի զարմանս օրենուսույց քահանաների ու փարիսեցիների, որ մի դեպքում «ո՞վ է իմ ընկերը» հարցնելով՝ ուզում էին ասել՝ «ո՞վ է ինձ նման օրինապահ», մյուս դեպքում՝ տաճարում աղոթելիս իր անձն էր փառաբանում: Իսկ այն, ինչ անում էր Քրիստոսը, նրանց եւ բոլորիս փրկության համար էր անում:

*Հյուրընկալեց*
*Հայկ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԸ*

# Հանդիպումներ Վարշավայում

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան Տ. Տաճատ աբեղա Ծատուրյանը, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ իր բարձրագույն ուսումն է շարունակում Վարշավայի համալսարանում եւ միաժամանակ հոգում Հայ Առաքելական եկեղեցու համայնքի հոգեւոր կարիքները, վերջերս հանդիպումներ է ունեցել Վարշավայի եւ Համայն Լեհաստանի Ուղղափառ մետրոպոլիտ Սավայի, Վարշավայի արք. կարդինալ Կաժիմիեժ Նիչի եւ Կրակովի արք. կարդինալ Ստանիսլավ Ջիվիշի հետ եւ փոխանցել նրանց Ամենայն Հայոց Հայրապետի ողջույնները: Բարձրաստիճան հոգեւորականների հետ հայր սուրբը զրուցել է Հայ-Կաթոլիկ եւ Հայ-Ուղղափառ Եկեղեցիների միջեւ գոյություն ունեցող եղբայրական հարաբերությունների, ինչպես նաեւ Լեհաստանում բնակվող առաքելական ու կաթոլիկ հայկական համայնքների մասին:

Բարձրաստիճան հոգեւորականներն իրենց շնորհակալությունն են հայտնել՝ Վեհափառ Հայրապետի ողջույնների եւ Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը խորհրդանշող նվերների համար: Փոխադարձաբար հայր սուրբը Վեհափառ Հայրապետի եւ անձամբ իր անունից երախտագիտություն է հայտնել Կաթոլիկ եւ Ուղղափառ Եկեղեցիների առաջնորդներին՝ Լեհաստանում բնակվող հայորդիների հանդեպ դրսեւորվող ազնիվ վերաբերմունքի, ինչպես նաեւ Պատարագ մատուցելու նպատակով եկեղեցու տրամադրման գործում Հայ Եկեղեցու հավատավոր զավակներին ցուցաբերած աջակցության եւ օգտակարության համար:

*Վարշավայի հայոց հովվություն*

# ՏՅԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՈՆԸ ԵՎ ԽԱՐՈՒՅԿԸ

*Սկիզբը՝ էջ 7*

Եվ ինչպես որ [Անանիան եւ իր ընկերները], երբ հրի մեջ ընկան, գովում եւ օրհնում էին Աստծուն (Դանիել Գ 51), այլեւ բոլոր արարածներին՝ ջրին, հրին, ցրտին, տոթին ու մյուսներին, օրհնության էին հրավիրում (Դանիել Գ 61-79): Նույնպես եւ մենք, խոսքով ու գործերով, վառած հուրն ի պատիվ արարածների Արարչի, ընծայում ենք Քրիստոսին:

**Երրորդ՝** որովհետեւ Քրիստոսն իր գալստյամբ ասաց. «Ես եմ աշխարհի լույսը,- ամեն ոք, որ Ինձ հավատում է, խավարում չի մնա (Հովհ. Ը 12, ԺԲ 46), նաեւ ասաց. «Երկրի վրա կրակ գցելու եկա, եւ որքա՜ն եմ կամենում, որ արդեն իսկ բորբոքված լինի» (Ղուկ. ԺԲ 49): Դա Սուրբ Հոգին էր խորհրդանշում, որ հրեղեն լեզուներով առաքյալների վրա իջավ, նրանց մեղքերը մաքրեց ու միտքը լուսավորեց: Սրա համար ենք Քրիստոսին ընդառաջ ելնում ու լույս վառում, որովհետեւ Քրիստոսը [իբրեւ] լույս եկավ աշխարհ, մենք էլ Լույսին հավատացինք եւ Լուսո որդիներ դարձանք: Եվ հուրը բորբոքելով՝ Նրա սիրո հուրն ենք խնդրում, որպեսզի մաքրի մեր մեղքերի ժանգն ու աղտոտությունը, եւ սրբելով պայծառեցնի մեր միտքն ու հոգիները: Դրա համար այդ երեկո կրակ ենք վառում:



**Չորրորդ՝** քանի որ Քրիստոսի հաջորդ ու վերջին գալուստը հրով է լինելու, վախճանի ժամանակ, ինչպես ասում է մարգարեն՝ «Մեր Աստված հայտնապես է գալու, եւ Նրա առաջ հուր է բորբոքվելու» (Սաղմոս ԽԹ 3): Որովհետեւ առաջին գալուստը խոնարհությամբ ու ծածուկ էր, ինչպես [որ անձայն իջնում է] ցողը բրդի վրա (Սաղմոս ՀԱ 6), որպեսզի ով որ իր անձնիշխան կամքով կամենա, Քրիստոսին հավատա ու փրկվի: Իսկ վերջին գալուստը սրա պես չէ, այլ հայտնապես ու տիեզերատես՝ հարական փառքով, ու բոլոր հրեշտակները՝ Նրա հետ. «Ինչպես փայլակը, որ ելնում է արեւելքից եւ երեւում է մինչեւ արեւմուտք» (Մատթ. ԻԴ 27), եւ հուրը Նրա առջեւ կբորբոքվի, եւ Նրա շուրջն էլ սաստիկ մրրիկ [կլինի] (Սաղմոս ԽԹ 3): Մրրիկն ու մեգը մեղավորներից ծածուկ ու անտես լինելն են խորհրդանշում, որովհետեւ մեղավորներն ու անհավատները չեն կարող Քրիստոսի աստվածությունը տեսնել, քանի որ հուրը մատնանշում է սրբերի ու հավատացյալների պայծառ տեսությունը, որ հայտնապես տեսնում են Քրիստոս Աստծուն մարդացած, մարմնով երեւացած, եւ Մարդուն որպես մարդկանց Արարիչ են տեսնում: Դարձյալ կրակը երկու հատկություն ունի: Եվ Քրիստոսը հրով պիտի երեւա, որպեսզի սրբերին լուսավորի, պսակի ու անստվեր լույսը մտցնի, իսկ մարդկանցից չարերին ու անհավատներին՝ սատանայի հետ հավիտենական հուրն ուղարկի ու տանջի: Ըստ այդմ՝ «անիծյալնե՛ր, գնացե՛ք ինձանից հավիտենական կրակը, որ պատրաստված է սատանայի եւ իր հրեշտակների համար» (Մատթ. ԻԵ 41): Այս խորհրդով կրակ ու ջահ ենք վառում եւ Քրիստոսի գալուստը պատվում: Կրակը ծուխ ու այրում ունի, որոնք աչքերի լացն ու մեղավորների տանջանքներն են խորհրդանշում, իսկ լույսը պայծառության ու լուսավորելու [հատկություն] ունի, որ արդարների պայծառության խորհրդանիշն է, եւ Քրիստոսը որպես Լույս եկավ ու աշխարհում ծագեց (Հովհ. ԺԲ 46):

Սրանք են այդ օրը հուր եւ լույս վառելու պատճառները **(«Ձմեռան հատոր», էջ 79-80):**

*Ռ. ԱՐՈՅԱՆ*

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
**Գլխավոր խմբագիր՝**
Աստղիկ Ստամբոլցյան
**Գրանցման վկայական՝ 624**
**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին
**Հեռախոս՝ 517197**
**Էլ.փոստ՝**
**qh@etchmiadzin.am**
Ստոր. տպագր.
4.3.2011 թ.
**Տպաքանակը՝ 2100**
**Գինը՝ 50 դրամ**